

նութեամբն հանին զԳաւիթն յառաջնորդութենէ եւ եզին զայս Գրիգոր Եպիսկոպոսն, որ յայնմ ժամանակին դեռ մոնոզոն արեղայ էր եւ քահանայ օրհնեցին եւ ի տեղի Գաւթի եզին . . . : Եւ ի միւս ամին որ թվին ՌԿԲ (= 1613) էր, դարձեալ ժողովեցան ամենայն երկրէ տօլվաթաւորքն եւ Զօղեցիքն եւ առին զԱւետիս Կաթողիկոսն ընդ իւրեանս բազում վարդապետօք եւ գնացին յԵրուսաղէմ եւ օրհնեցին Եպիսկոպոս . . . :» «Եւ յետ այնորիկ գնաց (Աւետիք) յետ, ի Էջմիածին, եւ անտի վրաստունն եւ անդ եղեւ վախճան նորա, որ էր թվին ՌԿԲ», (= 1620):

Երուսաղեմայ վանքը պահուած՝ «Պատմ. եւ վարք Պարոնտիրի» մագաղաթեայ գրութեան (թ. 322) վրայ ժամանակակից մը գրած է (էջ 71—2) նոյնպէս. «Եւ յորժամ տեսին ազգս Հայոց զհաւատարիմ ծառայութիւն սորա (Պարոնտէրի) որ վասն սուրբ Երուսաղեմայ, ապա ի ՌԿԲ (= 1613) թուին հարկ ի վերայ եզին եւ կոչեցին զառաքինի Աւետիս Կաթողիկոսն սուրբ Էջմիածնայ, եւ բազում վարդապետք ընդ նմա եւ ետուն զնա ձեռնադրել եւ օրհնել Արքեպ. սուրբ Երուսաղեմայ:»

Ունինք ուրիշ վկայութիւն մ'ալ Աւետիքի մասին: Զաբարիա Սարկաւազ իր Պատմութեան մէջ (Էջմ. 1870, Ա. էջ 50) կը յիշէ, որ 1603ին երբ Պարսիկներն Երեւան առին եւ Ամիրգուն Խանը կուսակալ դրին, (իրը 1604ին) Երեւան կը գտնուէր տակաւին Աւետիս Կա-